Հավատն անսպառ է, եթե կան հավատի նվիրյալներ

Երվանդ

ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանաստեղծ

Ա՛Ր մեր ողջ ժողովրդի համար է այժմ չափազանց դժվարին ժամանակաշրջան, գաղտնիք չէ: Արցախում պատերազմ է, և դրանով ամեն ինչ ասված է:

Պատերազմը տերմինատորի իր սև մագիլներով չանգռում է նաև Հայաստանի սահմանները, օր-օրի ավելացնում մեր վերքերը, բայց մենք, հակահարված տալով, արժանապատվորեն մեզանից հեռանալու նշան ենք անում նրան, և գոհ կլինենք, եթե նա, իրոք, հեռանա:

Մեզ համար քիչ չէ և Արցախի պատերազմն իր զոհերով, իր ավեր ու ավարով, իր հոգեմաշ ծանրությամբ: Դա մեզ պարտադրված պատերազմ է, մեզ համար կենաց ու մահու պայքար, և նույնիսկ, անկախ ուժերի հարաբերակցությունից, տանուլ տալու իրավունք չունենք: Դա պատերազմ է ո՛չ միայն հանուն Արցախի գոյության:

Այս ամենի գիտակցումով է, ահա, որ մեր ժողովուրդը մեծ մասամբ անմոռուչ տանում է այս օրերի անօրինակ դժվարությունները և դեռ, ինչպես ասում են, իր բերանից կտրելով, մի բան էլ արցախցի իր եղբայրներին ու քույրերին է բաժին հանում: Դրանով առավել թանկ ու արժեքավոր է դառնում ժողովրդի զոհողությունը: Ախր... թաքցնելու չէ՝ չլիներ անգամ պատերազմական այս իրավիճակը, միևնույն է, կրկին թեթև չէր լինելու մեր ժողովրդի մի ստվար հատվածի հոգսերի բեռը:

Գները սանձազերծվեցին ու մոլեգնեցին, իսկ շատերիս գրպաններում դեռ հին օրերի խոճուկ ռուբլիներն ու կոպեկներն են:

Գիտեի՞ք, որ թանկություններ են սպասվում: Գիտեինք, բայց ոչ այս աստիճանի: Եվ հետո՝ ծովն ընկածն անձրևից չի վախենա. մինչ այդ էլ մեզանից շատերի համար ամեն բան թանկ էր թվում և իսկապես թանկ էր. այնպես որ, հոգեբանորեն կարծես թե նախապատրաստված էինք: Բայց այն, ինչ տեսանք ու զգացինք, ապշեցրեց նույնիսկ մեզ պես «թրծվածներին»: Իմանայինք էլ, որ այդպես է լինելու, ի՞նչ կարող էինք անել...

Իսկ ոմանք կարո՛ղ էին և արեցի՛ն. շքեղ առանձնատներ կառուցեցին, զանազան արտադրամասեր հիմնեցին, ունեցած շատը բազմապատկեցին, և այսօր արդեն թանկությունը ոչ միայն սարսափելի չէ նրանց համար, այլև, թերևս, ձեռնտու է:

Հետո էլ կասվի, թե ազատ մրցակցության ժամանակներ էին, և հաջողության հասան առավել ձեռներեցները: Իրականում առայժմ ոչ թե ձեռներեցությունն է հաղթել, այլ, ավելի շուտ՝ նախկինում անազնվորեն կուտակված փողը: Բայց մենք հեռու ենք հիշյալ փողատերերի ուժերն ու հնարավորությունները կասկածի տակ առնելու մտքից: Նա, ով այսպես թե այնպես կապվել է փողին, ոչ մի պայմանով այլևս չի կամենա բաժանվել նրանից: Առավել ևս՝ մեր օրերում:

Գլուխը քարը. տհաճ է այս մասին այսքան խոսելը: Սակայն լավ է գոնե, որ մեր այս հայրենակիցները նախորդների նման իրենց մեծ կամ փոքր կարողությունները չեն տեղափոխել ԱՄՆ կամ մեկ այլ երկիր, այլ դեպի ապագա մեծամասշտաբ հարստություն տանող սանդուղքի առաջին աստիճանները դրել են հայրենի՛ հողի վրա: Իսկ ինչ մնում է մեզ՝ հիշատակված ստվար հատվածին (ես ինձ ու ինձպեսներին չեմ առանձնացնում այդ հատվածից), չենք ընկճվի՝ կդիմանանք: Բնածին լավատեսներ ենք մենք:

Գինը քանի վեր բարձրացավ,
Այնքան ես ցած խոնարհվեցի,
Նա գնալով ահագնացավ՝
Հող ու քարին խառնվեցի:

Բայց թեկուզև դառնա արծիվ,
Գահավիժի պիտի նա ցած.
Գինն անարժեք չի թևածի,
Եվ ես հողից կելնե՛մ դարձյալ:

Եվ իսկապես, ոչ այնքան գինն է մեզ վրա ազդում, որքան մեր հանդեպ ցուցաբերվող անտարբերությունը: Հասկանալի պատճառներով մենք չենք խոսում վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի պակասի մասին, բայց որ, ասենք, վերահսկողություն չի սահմանվում այդ քի՛չն անգամ խնայողաբար ու նպատակային օգտագործելու հանդեպ, կամայականությունն ու թողտվությունն են իշխում սպասարկման գրեթե բոլոր ոլորտներում (կապ, տրանսպորտ, մատակարարում), դա արդեն համբերությունից կարող է հանել նույնիսկ ինձ նման լավատեսին: Եվ եթե այս ամենին ավելացնենք նաև մեր շուրջ մոլեգնող կուսակցական գաղտնի ու բացահայտ կռիվները, փոխադարձ չարախոսությունները ու չարախնդությունները, այն էլ՝ այս տագնապալի օրերին, պատկերն ավելի մռայլ կդառնա: Չեմ ուզում կողմնակի դիտողի նման նայել այս ամենին, չեմ ուզում, որ մեր նորածնունդ անկախությունն աճի այս մթնոլորտում, չեմ ուզում շատ-շատերի պես սոսկ թերություններ նշել ու գնալ իմ բանին: Եվ երանի ամեն մեկս չուզենար իմ այս չուզածները՝ և ցանկանար մի բանով օգտակար լինել մեր միասնությանն ու մեր գալիք օրվան:

Դա է կարևորը: Մնացած ամեն ինչ կախված է դրանից, այդ թվում՝ նաև հոգևոր սննդի պահանջը, որ նոր հարաբերությունների այս մրցավազքում ու քաոսում ժամանակավորապես իր դիրքերը զիջել է նյութին ու նյութականին:

Հավատն անսպառ է, եթե կան հավատի նվիրյալներ: Իսկ մենք իրավամբ մեզ այդպիսիք ենք համարում: